ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ.

Սիրով ողջունում եմ ձեզ և շնորհակալություն հայտնում Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի կազմակերպած միջազգային գիտաժողովին մասնակցելու համար: «Բանահյուսություն և գրականություն» խորագիրը կրող գիտաժողովում քննվելու են այնպիսի հարցեր, որոնք նորովի կմեկնաբանեն բանահյուսության և գրականության արդի հիմնախնդիրները, դրանց փոխառնչությունները, լեզվի և լեզվամտածողության արժեհամակարգային առանձնահատկությունները: Շատ կարևոր է, որ հատկապես «Սասնա ծռեր» հայ ժողովրդական դյուցազներգությանը վերաբերող հարցերը ներկայացվում են եվրոպական էպոսագիտության և էպոսների համապատկերում:

Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի մեջ բացառիկ տեղ է գրավում «Սասնա ծռեր» էպոսը, որն անցել է դարերի միջով, հաղթահարել ժամանակի փորձությունները և պատմական խոչընդոտները, արտացոլել, պահել ու պահպանել և սերնդեսերունդ փոխանցել է հայ ժողովրդին բնորոշ աշխարհընկալումը, մտածելակերպը, հոգեբանությունը հնագույն, միֆական ժամանակներից մինչև նոր ժամանակներ: Ժողովուրդը սիրով ու գուրգուրանքով է վերաբերվել իր ստեղծած էպիկական հերոսներին, նրանց քաջագործություններին, դրանք ներկայացրել խրոխտ պարերի ու երգերի միջոցով: Եվ պատահական չէ, որ գիտական այրերի տարբեր սերունդներ իրենց ներքին կարողության, համառության ու հետևողական աշխատանքի շնորհիվ բացահայտել են հայ ժողովրդական վիպերգի արժանիքները: Բայց ինչպես ժողովրդական բանահյուսության այլ գլուխգործոցներն իրենց բովանդակութ-

յամբ շատ հարուստ են ու բազմաշերտ, այդպես էլ «Սասնա ծռեր» էպոսն է անսպառ իր բովանդակության, մատուցման ձևերի առումով: Հետևապես համազգային արժեք ներկայացնող այս գլուխգործոցը շարունակական և համակարգային ուսումնասիրությունների կարիք ունի: Պատահական չէ, որ ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնը իր ներդրումն է ունենում այս կարևոր նպատակի իրագործմանը «Եվրոպական էպիկական ավանդույթը և «Սասնա ծռեր» էպոսը» թեմայի շրջանակում (2021-2024 թվականներ):

Վստահ եմ, որ Գավառի պետական համալսարանում կազմակերպված գիտաժողովը, որ իրականացվելու է առկա և առցանց ձևաչափերով, իր նեդրումը կունենա հայրենի էպոսագիտության զարգացման մեջ:

Եվ վերջում կրկին մեր շնորհակալությունն ենք հայտնում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի, Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Շիրակի հայագիտական կենտրոնի, Երևանի պետական համալսարանի, Վանաձորի պետական համալսարանի, Հայաստանի և արտերկրի բուհերի, գիտական հաստատությունների ներկայացուցիչներին՝ գիտաժողովի աշխատանքներին ակտիվորեն մասնակցելու համար: